ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

29-Ը ԱՊՐԻԼԻ 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ՝ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ 3-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 (ութ) անդամներ:

Բացակա էին՝ Ա. Ալեքսանյանը, Մ. Ամիրյանը, Ա. Ամբարյանը, Ա. Ալեքսանյանը, Լ. Բաբայանը, Հ. Դարբինյանը, Ֆ. Մելքումյանը

Համայնքի ղեկավարի 1-ին տեղակալի իրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Ա. Խաչատրյանը, Ա. Ավետիսյանը, Մ. Օհանյանը, Հ. Խաչատրյանը, ՀՊ խմբագրության ներկայացուցիչ Ա. Մանուկյանը և գրասենյակի Մ. Մելքումյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ Ավետիսի Զոհրաբյանը

Նիստը արձանագրում էր Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի ծառայող՝ Ա. Գասպարյանը

ԼՍԵՑԻՆ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(ԶԵԿ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Հաստատել 29-ը ապրիլի 2025թ. վեցերորդ նստաշրջանի հերթական՝ երրորդ նիստի օրակարգը հետևյալ հարցերով.

2.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

3.Եղեգիս համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին,

4.Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը երեք տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին,

5.Պետական սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

6.Քաղաքացի Արտակ Անաստասի Ստեփանյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

7.Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին,

8.Եղեգիս համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ ընտրված առաջարկների իրականացմանը հավանություն տալու մասին,

9.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1,20729 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող, այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին:

10.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

առաջարկվեց օրակարգից հանել 5-րդ կետը

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50 Ա/

<u>ԼՍԵՑԻՆ</u>

*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2011թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման

փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների զոտեվորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի 31/03/2025թ. N2/փ-116 դրական եզրակացությունը

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը (0,15447հա մակերեսով, 10-024-0109-0078 կադաստրային ծածկագրով) փոխադրել հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը պատմական և մշակութային:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51 Ա/

<u>ԼՍԵՑԻՆ</u>

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Եղեգիս համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի մայիսի 29 -ին, ժամը 15:00-ին:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52 Ա/

ԼՍԵՑԻՆ

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(ԶԵԿ. Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ),* Ա. Գաբրիելյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 28-ը հոկտեմբերի 2010 թվականի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N1477-Ն որոշման պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը երեք տարի ժամկետով վարձակալության օգտագործման տրամադրելուն՝

1.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Ցորենանոց» կոչվող հանդամասում գտնվող 0,2 հա և 0,4 հա մակերեսներով արոտավայրերի հողատեսքերը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն գյուղի բնակիչ Դավիթ Սասնիկի Հակոբյանին:

2.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 1հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Վարդահովիտ գյուղի բնակիչ Սասնիկ Խաչիկի Հակոբյանին:

3.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 5հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Վարդահովիտ գյուղի բնակիչ Տարոն Ռաֆիկի Դանիելյանին:

4.Եղեգիս համայնքի Շատին գյուղի «Աբանա» կոչվող հանդամասում գտնվող 140հա և 144հա մակերեսներով արոտավայրերի հողատեսքերը վարձակալության օգտագործման տրամադրել Եղեգնաձոր համայնքի Գետափ գյուղի բնակչուհի Հայկանուշ Գրիգորի Արամյանին:

5.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 70հա մակերեսով արոտավայրը վարձակալության օգտագործման տրամադրել Արենի համայնքի Չիվա գյուղի բնակիչ Կարապետ Սմբատի Կարապետյանին:

6.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 71հա մակերեսով արոտավայրերի հողատեսքը վարձակալության օգտագործման տրամադրել Արենի համայնքի Չիվա գյուղի բնակիչ Արմեն Երջանիկի Թադևոսյանին:

7.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 80հա մակերեսով արոտավայրերի հողատեսքը վարձակալության օգտագործման տրամադրել Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ գյուղի բնակիչ Ռաֆիկ Սամվելի Վարդանյանին:

8.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Սևաժայռ» կոչվող հանդամասում գտնվող 5հա մակերեսով արոտավայրերի հողատեսքը վարձակալության օգտագործման տրամադրել Շատին գյուղի բնակիչ Իգոր Լյուդվիգի Սարգսյանին:

9.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ կնքել արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագիր, վճարի չափը սահմանելով տվյալ արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Գործադիրից դուրս հանելու առնչությամբ կարծիք և դիրքորոշում մեր կողմից չունենք:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53 Ա/

ԼՍԵՑԻՆ

*ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

հարցին 8 օրենսդրական հարց կա.

*(ԶԵԿ. Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է Հերմոն գյուղի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության կոմունալ ենթակառուցվածքների հողատեսքի (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0120- , մակերեսը 0,8837հա) նպատակայինն նշանակությունը փոխել բնակավայրերի նշանակության, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման:

2.Հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

Կողմ- Դեմ- Ձեռնպահ-

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54 Ա/

ԼՍԵՑԻՆ

*ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ԱՆԱՍՏԱՍԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(ԶԵԿ. Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների զոնավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Եղեգիս գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Արտակ Անաստասի Ստեփանյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության խոտհարք հողատեսքի (0,2967հա մակերեսով, 10-021-0110-0070 կադաստրային ծածկագրով) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N ~~55~~ 54 Ա /

ԼՍԵՑԻՆ

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՍՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ղեկավարի 18/04/2025թ. թիվ 94Ա որոշումը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը, և ստորև ներկայացված գույքերը գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում՝

հեռուստացույց ARTEL 43HF3300- 1 հատ, 92 500 ՀՀ դրամ,
բազմաֆունկցիոնալ տպիչ սարք CANON 3010-1 հատ, 145 000 ՀՀ դրամ,
հեռուստացույցի տակդիր DM 4010-1հատ, 8000 ՀՀ դրամ:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N ~~56~~ 55 Ա /

<u>ԼՍԵՑԻՆ</u>

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆՏՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. Մ. ԽՈՐԵՆՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի և 13-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներով

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է*

1.Հավանություն տալ մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ Եղեգիս համայնքի բնակիչների կողմից ներկայացված և քվեարկության արդյունքում ընտրված առաջարկներին՝ համաձայն հավելվածի:
2.Առաջարկել՝ ընտրված առաջարկների իրականացման ավարտից հետո ամփոփ հաշվետվություն ներկայացնել ավագանուն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 8 Դեմ- 0 Չեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N ~~57~~ 56 Ա/

ԼՍԵՑԻՆ

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1,20729ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐԵԼԱՀՈՂ, ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող, այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-035-0268- , մակերեսը՝ 1.20729հա, որից 0,88999հա վարելահող և 0,3173 հա այլ հողատեսք, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 120 ( Տեկ հարյուր քսան ) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 0 Չեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N ~~58~~ 57 Ա /

Ավագանու անդամներ՝

Ստեփանյան Արթուր

Մարտիրոսյան Նարեկ

Մարտիրոսյան Զոյա

Հակոբյան Արտուշ

Պողոսյան Հրաչյա

Մանուկյան Սաթինե

Նազարյան Արգիշտի

Ղահրամանյան Վարդան

Գաբրիելյան Ահարոն

Սմբատյան Մամիկոն բացակա

Հարությունյան Կարեն բացակա

Սմբատյան Արսեն բացակա

Ստեփանյան Սաշա բացակա

Միքայելյան Քրիստինա բացակա

Բաբայան Վահե բացակա

_____

*Նիստն արձանագրեց՝* _____